1640· Արդ, Ուրպանոս փափն գրէ Թուղթ առ Թագաւորն Լեհաց յայսմ ամի, Աւլիսի 16, խնդրելով զի օգնեսցէ Նիկողայոսին. եւ առ Փիլիպպոս կաթողիկոսի, յորդորելով զսա... զալ յուղղափառութիւն... բայց յաղագս Լէոպոլսեցւոցն՝ ոչինչ իշէ ի Թղթին փափն: Պատրի Պողոսն դառնայ ի Լէոպոլիս, եւ ասսի տուեալ նման Հայոց դեսպան ոմն՝ երթայ յԷջմիածին: Բայց թէ որպիսի պատասխանի տուեալ իցէ կաթողիկոսն ոչ գտաք վասն Լէոպոլսեցւոցն»: «Կամենից», էջ 139-140:

Այսպիսով, Թորոսովիչի դրութիւնը շարունակւում էր մնալ անորոշ: Եկեղեցիները փակ էին: Ինքը մնում էր առաջնորդ առանց հօտի, որը նրան չէր ճանաչում, առանց ծխի, որը չէր ենթարկւում նրան: Տեսնելով իր դրութեան անելութիւնը՝ Թորոսովիչը սկսեց դարման որոնել ուրիշ կողմից: Մեկնեց Հռոմ եւ այնտեղ, 1635 թ· Յուլիս 11-ին, Ուրբանոս Ը· պապի ներկայութեամբ, նորից հանդիսաւորապէս արտասանեց հռոմէական դաւանանքի հաւատոյ հանգանակը եւ պապին ճանաչեց իր եկեղեցու պետ:

Թորոսովիչն ընդունուեց մեծ պատիւներով· նրան շնորհուեց pallium (կարդինալական վերարկու), իսկ Լվովի աթոռը հռչակուեց ռրքեպիսկոպոսական եւ նրա իրաւասութիւնը տարածուեց Լեհաստանում, Մոլդաւիայում եւ Վալախիայում ապրող հայերի վրայ*): Միեւնոյն ժամանակ, Հռոմում ձեռնարկուեց հայոց պատարագի վերամշակութեան, համաձայնեցնելու համար հռոմէական եկեղեցու կանոններին, որ եւ աւարտուեց 1672 թ· ու պապի վաւերացումն ստանալուց յետոյ, տպագրուեց Հռոմում:

Հայերը անվերջ հալածւում էին, եւ թէեւ, ինչպէս ասուեց, Վլադիսլաւ Թագաւորն ինքը հակառակորդ էր ճնշումների, ամբողջ կաթոլիկ շրջապատը եւ, գլխաւորապէս, Մարիա-Լիւդովիկա Թագուհին շատ բուռն կերպով պաշտպանում էին միութիւնը եւ ամէն կերպ աջակցում թէ՛ Թորոսովիչի եւ թէ՛ լատին եկեղեցու գործիչների ձեռնարկներին: Վլադիսլաւ Թագաւորի մահուանից յետոյ Մարիա-Լիւդովիկան համոզեց նրա յաջորդ Եան Կազիմիր Թագաւորին (Վլադիսլաւի եղբօրը) սպառնալ հայերին, որ նրանք կը զրկուեն իրենց ունեցած բոլոր արտօնութիւններից, եթէ չհամաձայնուեն միանալ կաթոլիկ եկեղեցուն**):

Պայքարը այս պայմաններում դառնում էր խիստ դժուար եւ, թէեւ ունիտոր դարձողների թիւը համեմատաբար քիչ էր, այնու ամենայնիւ նրանք չէին կարող չազդել հայ համայնքի տրամադրութեան վրայ: Այս վերջինի մի մասը, թերեւս ամենագործօնը, այդ պայքարի վրայ ահագին դումարներ ծախսելով՝ աղքատացել ու զրկուել էր պայքարը շարունակելու հնարաւորութիւնից եւ հետզհետէ դառնում էր անտարբեր դէպի կրօնական հարցերը, իսկ միւս, հաւանաբար ամենախոշոր մասը, յոգնած անել վիճակից՝ սկսեց թողնել ու հեռանալ Լվովից եւ Լեհաստանի սահմաններից աւելի հանդիստ ու ապահով վայրեր: Մեծ մասը անցաւ Մոլդաւիա ու Վալախիա, ոմանք՝ Հունգարիա, իսկ մնացածները՝ ով ուր կարող էր:

Իր հերթին Թորոսովիչը, հայոց եկեղեցիներից առած բոլոր միջոցները վատնելուց յետոյ, տեսնելով կատարեալ սնանկութիւնը իր արկածախնդրութեան՝ սկսեց հաշտութեան կարելիութիւններ որոնել իր հօտի հետ: Հէնց այդ ժամանակներն էր, 1652 թ·, որ Փիլիպպոս կաթուղիկոսը այցելեց Պոլիս: Թորոսովիչն օգտուեց այդ առիթից եւ նոյնպէս գնաց Պոլիս՝ տեսնուելու համար կաթուղիկոսի հետ:

Ի՞նչ անցաւ դարձաւ նրանց տեսակցութեան միջոցին, ազդեցութեան ի՞նչ միջոցներ կիրառեց Փիլիպպոսը, արդեօք Թորոսովիչը զգա՞ց իր ծանր յանցանքը հայ ժողովրդի հանդէպ, թէ՞ Փիլիպպոս կաթուղիկոսի անձնական հմայքը դեր կատարեց, յայտնի չէ: Բայց Թորոսովիչի յետագայ քայլերից երեւում է միայն

*) Հետաքրքրական է նկատել, որ յոյն ուղղափառների անհամեմատ աւելի բազմամարդ թեմը երկար ժամանակ մնաց սոսկ եպիսկոպոսական եւ միայն 1807 թ· վերածուեց արքեպիսկոպոսականի:

**) Lizke Cudzoziemcy w Polsce, էջ 80: